ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947. № 3 *Общественные науки*

Հ. Ս. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում կապիտալիզմի զարգացման հարցի վերաբերյալ գոյություն ունեն տարատեսակ կարծիքներ։ Ոմանք չեն ընդունում, որ 19-րդ դարում Հայաստանում կապիտալիստական հարաբերություններ եղել են, բայց չեն ասում, թե ինչ հարաբերություններ են եղել։ Ոմանք հակառակ տեսակետն ունեն և կապիտալիստական հարաբերությունների գոյությունը հաշվում են 19-րդ դարի սկզբից, ոմանք էլ ընդունում են, որ 19-րդ դարի 2-րդ կեսից են սկսվում այդ հարաբերությունները երևան գալ, սակայն տարբերություն չեն տեսնում այդ տեսակետից Անդրկովկասի մնացած մասերում կապիտալիստական հարաբերությունների խորության և Հայաստանում եղած հարաբերությունների խորության միջև։ Դեռ ավելին. որոշ ընկերներ հակված են անուղղակի ճանապարհով ցույց տալու, որ իբրև թե Հայաստանում կապիտալիզմ առաջացնող հանգամանքներն ավելի ուժեղ են եղել, քան թե նույնիսկ Ռուսաստանում։

Վերևում հիշատակված տեսակետները պաշտպանողների հետ մենք մի առիթով վիճաբանել ենք 1945 թվականին Երևանի Պետական Համալսարանի դիտական սեսիայում մեր կատարած զեկուցման ընթացքում, ուստի այստեղ այդ հարցերի վրա նորից կանգ առնելն ավելորդ է։

Անտարակուսելի է, որ Հայաստանում կապիտալիզմի զարգացման հարցն անքակտելիորեն կապված է Ռուսաստանում և Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման հետ։ Այստեղ կապիտալիստական հարաբերությունների առաջանալն ու զարգանալը մեծ չափով պայմանավորված է եղել Ռուսաստանի անտեսական զարդացմամբ և այն քաղաքականությամբ, որ վարում էր ցարիզմը ծայրագավառներում։

Ռուսաստանին միացվելու օրվանից՝ Հայաստանի էկոնոմիկան զարգացել է Ռուսաստանի էկոնոմիկայի գործեղ ազդեցության տակ, վերջինս հանդիսացել է մի տեսակ կարգավորող ինչպես Ջացած ծայրագավառների, այնպես էլ Հայաստանի էկոնոմիկայի համար։

Մինչոեֆորմյան Ռուսաստանը, որը տակավին գտնվում էր իր զարգացման մանուֆակտուրային աստիճանի վրա, երբ բացակայում էր խոշոր արդյունաբերությունը և հետևապես վերջինի համար ներքին շուկա ստեղծելու անհրաժեշտությունը, Ռուսաստանը ծայրագավառի առջև հատուկ պահանջներ չէր առաջադրում հումքի և բանվորական ուժի գծով, հավասարապես նաև սպառման շուկաների գծով։

Մեզ մոտ գյուղատնտեսության մեջ ապրանքային հարաբերությունները թույլ էին և գյուղատնտեսության նույնիսկ այն ճյուղերը, որոնք հեռագայում ենթարկվեցին խիստ ապրանքայնացման. ինչպես օրինակ

բաժրակաժչակությունը, այգեգործությունը և այլն, այդ շրջանում զարգանում են դանդաղ, բնատեսության հատուկ հատկանիշներով։ Ինչ վերաբերում է հնուց գոյություն ունեցող արդյունաբերության մի քանի ճյուղերին, սրանք էլ ծառայում էին գյուղատնտեսությանը որպես օժանդակ ճյուղ. ինչպես օրինակ, բաժրակի, խաղողի, յուղաբույսերի և այլնի վերաժշակումը։ Կարճ ասած՝ արդյունաբերությունը չէր անջատված գյուղատնտեսությունից։ Ինչ վերաբերվում է մեր քաղաքներին, այստեղ էլ քաղաքային բնակչության ապրելակերպը քիչ բանով էր տարբերվում գյուղական բնակչության ապրելակերպից։ Քաղաքային կյանքի բնորոշ գծերից մեկը արհեստների բավականաչափ տարածված լինելն էր, մասնավորապես Ալեքսանդրոպոլում, որտեղ արհեստներն ամփոփված էին համքարությունների մեջ և հիշեցնում էին միջնադարյան քաղաքները։

Եվ բ են առաջանում ու զարգանում կապիտալիստական հարաբերությունները մեզ մոտ և ինչ ուժերի ազդեցության տակ։

Ռուսաստանի համար այդ շրջանն սկսվում է գյուղացիական ռեֆորմներից հետո, մի ռեֆորմ, որի անհրաժեշտությունը նախ և առաջ պայմանավորված էր Ռուսաստանում արդեն սկիզբ առած կապիտալիստական հարաբերությունների համար ճանապարհ հարթելու անխուսափելիությամբ, կամ Լենինի արտահայտությամբ՝ տնտեսական ուժն էր, որ Ռուսաստանին մղեց դեպի ռեֆորմների կիրառումը։ Հայաստանում տնտեսական ուժն այդպիսի բացահայտությամբ իրեն զգալ չէր տալիս և եթե այնուամենայնիվ այստեղ, Անդրկովկասում էլ կատարվեցին գյուղացիական ռեֆորմներ, ապա այն նորից կատարվում էր մի կողմից Ռուսաստանի տնտեսական զարգացման պահանջների ազդեցության տակ, իսկ մյուս կողմից էլ այստեղ այն կատարվում էր նաև քաղաքական որոշ նկատառումով։ Ահա թե ինչու, եթե Ռուսաստանում կիրառված ռեֆորմները Լենինը գնահատում էր որպես կալվածատերերի ձեռքով կատարված բուրժուական ռեֆորմներ, մեզ մոտ ռեֆորմը ոչ միայն բուրժուական չէր, այլ լինելով բացահայտ կալվածատիրական, 1861 թ. ռեֆորմի համեմատությամբ կիսատ-պռատ էր։ Այստեղից էլ հասկանալի է, որ ռեֆորմը կիրառողներն իրենց նպատակ չէին դրել այստեղ կապիտալիզմի զարգացման համար ճանապարհ հարթելը, թեպետ և ռեֆորմներից հետո ընկած շրջանում հետզհետե առաջացան կապիտալիստական հարաբերությունները։

Անդրկովկասում և Հայաստանում կիրառվող գյուղացիական ռեֆորմների հիմքում դրվեց 1861 թվականի ռեֆորմի սկզբունքները, հաշվի առնելով, սակայն, տեղական առանձնահատկությունները։ Այդ առանձնահատկությունների հաշվառումը գործնականորեն նշանակում էր որոշ նահանջ կատարել 1861 թվականի կանոնադրության դիրքերից հօգուտ հողատերերի։ Այդ կարգի նահանջներից պետք է հիշատակել ռեֆորմի հարմարեցնելը 1847 թ. ռեսկրիպտի պահանջներին, հողատերերի տիրակալության ճանաչումը գյուղացիների վրա, շնչարաժնի նորմայի չափը և այդ կապակցությամբ արտոնյալ պայմանների ստեղծումը հողատերերի համար գյուղացիներին հողը հատկացնելիս (1870 թ. կանոնադրության 9-րդ հոդվածը), այնուհետև ձևականորեն ետգնման թույլտվությունը և վերջինիս իրականացման համար անհրաժեշտ պայմանների լիակատար բացակայությունը։

Նահանջի այդ բոլոր մոմենտները միասին վերցրած հիմք են տալիս պնդելու, որ Հայաստանում կիրառված ռեֆորմներն ունեին կալվածատիրական բնույթ և իրենց էությամբ 1861 թ. ռեֆորմի համեմատությամբ ոչ միայն պրոգրեսիվ չէին, այլ առավել հետադիմական։

Հետռեֆորմյան շրջանում բյուրեղացած հողատիրությունն այսպիսի կերպարանք ունեցավ։ Եթե հողային ամբողջ ֆոնդը ընդունենք 100%։ ապա ամբողջ տնտեսությունների 98,97 % կազմող գյուղացիական տնտեսությունների ձեռքին։ գտնվում էր հողային ֆոնդի միայն 38,8%-ը։ Մանավոր խոշոր հողատերերը վանքերի հետ միասին, որոնք կազմում էին բոլոր տնտեսությունների ընդամենը 1,08%-ը, իրենց ձեռքում կենտրոնացրել էին ամբողջ հողային ֆոնդի 8,7%-ը և վերջապես ցարական գանձարանն իր ձեռքում պահում էր բոլոր տեսակի հողերի ավելի քան 52,5%-ը։

Հասկանալի է, որ Հայաստանում կիրառած ռեֆորմը թեպետ և խարխլում էր գոյություն ունեցող հարաբերությունների հիմքերը, սակայն նա իր բնույթով չէր կարող գյուղի շերտավորումը այնպիսի արագությամբ խորացնել, որպիսի արագությամբ խորացրեց 1861 թ. ռեֆորմը Ռուսաստանի ներքին նահանգներում։ Այս հանգամանքն անշուշտ պետք է նկատի առնել Հայաստանի գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հարցը քննելիս։

Մինչև գյուղացիական ռեֆորմները գյուղի կյանքն, իհարկե, իր մեջ պարունակում էր տնտեսական անհավասարություն, այնտեղ դանդաղորեն ձևավորվում էին սոցիալական տարբեր շերտեր։

Ռեֆորմի հետևանքով այդ պրոցեսն աշխուժանում է։ Երբեմնի նահապետական բնույթ ունեցող գյուղական համայնքը կորցրել էր այլևս իր համապարփակ կերպարանքը։ Հին հարաբերությունները պահպանող այդ հենարանից շատ բաներ արդեն հասել էին հետռեֆորմյան շրջանում։

Ստեղծվել էր այնպիսի դրություն, որ միևնույն գյուղի ծխերի կես մասից ավելին իրենց տրամադրության տակ ունեին միջանի անգամ ավելի հող, քան մնացած մասը։ Անհավասարություն էր գոյացել նաև տարբեր գյուղերի միջև։ Հայաստանի լեռնային և նախալեռնային գյուղերում, ուր արոտները պակաս նշանակություն չունեին քան վարելահողը, այդ գյուղերից շատերը բոլորովին զուրկ էին արոտներից։ Նրանք հաճախ էին դիմում նահանգապետին այդ առթիվ։ Հայտնի են մի շարք գյուղերի դիմումները, որոնք այժմս էլ գտնվում են Պետական արխիվում։[1]

Գյուղատնտեսության մեջ տնտեսական անհավասարության բյուրեղացման գործում որոշակի դեր էին խաղում ռեֆորմի կիրառման հետ կապված հողերի սահմանազատման անկանոնությունները, ինչպես նաև սահմանազատման ընթացքում կատարվող դանդաղ կեղծիքները։ Նախալեռնային և լեռնային շրջաններում, ուր ոչ բոլոր դեպքում էր, որ վարելահողերը կազմում էին ամբողջական մասսիվ, նրանք միմյանցից բաժանվում էին հաճախ։ վարելահողի մեկ երրորդին հավասար միջնակներով։ Ռեֆորմը կիրառելիս դրանք, նույնպես, հաշվել էին գյուղացիների վրա, դրանով իսկ արհեստականորեն ավելացնելով գյուղացիների չնչաբաժին հողը։ Նման փաս-

[1] Տես Պետական արխիվ, ֆոնդ 133, գործ 2167, թերթ 18 և շարունակությունը։

տերի մասին մենք սպառիչ տեղեկություն ենք ստանում Երևանի նահանգի մի չորք գավառների գյուղացիների դիմումներից։ Անհավասարություն կար նաև Ցրի օգտագործման բնագավառում։

Ցարական ինքնակալության հարկային սիստեմն էլ, որը հետևողականության շրջանում կառուցված էր ըստ շնչերի, ավելի էր խորացնում գյուղում արմատավորվող անհավասարությունը։ Մի կողմից տեղի էր ունենում հողերի կենտրոնացում գյուղական կուլակների և ունևորների ձեռքում, մյուս կողմից չքավոր գյուղացիները չունենալով իրենց առկա շնչերի քանակին համապատասխան հող, տուրքագրվում էին ըստ շնչերի։

Բացի դրանից համայնքի ընդհանուր օգտագործության տակ եղած արոտների (որոնք ծառայում էին անասնապահության) համար վճարվող հարկն էլ հավասար սկզբունքով էր բաշխվում գյուղացիների վրա, ելակետ ունենալով շնչերը և ոչ թե անասունների գլխաքանակը։

Չքավոր գյուղացիների տարեկան եկամուտը Նոր Բայազետի գավառում կազմում էր 70 ռուբլի, որից 40-ը ստացվում էր դաշտավարությունից, իսկ 30-ը՝ կողմնակի զառումներից, միջակներինը համապատասխանաբար կազմում էր 318 ռուբլի, որից 261-ը դաշտավարությունից, 57-ը անասնապահությունից, մինչդեռ ունևոր գյուղացիների անասնապահությունից եկամուտը (411 ռ.) գերազանցում էր միջակների և չքավորների ողջ եկամուտների գումարը։ Այդ պայմաններում արոտների համար հարկը վճարվում էր ըստ շնչերի։ Ստացվում էր այսպիսի դրություն. չքավորները վճարում էին հարկ իրենց եկամուտների 40,1%-ը, միջակները՝ 9%, ունևորները՝ 2%-ը։ Հենց այս կարգի երևույթները խորացնում էին արդեն գոյություն ունեցող անհավասարությունը և հետզհետե խորը շերտավորման ենթարկում գյուղը։

Մեր տրամադրության տակ կան բազմաթիվ փաստեր վերցված Գետական արխիվից, որոնք ցույց են տալիս, թե ինչպես վերև նշված երևույթների անմիջական ներգործության տակ տեղի են ունենում հողի առուծախի վարձակալության անթիվ դեպքեր չքավոր գյուղացիների համար ստրկացուցիչ պայմաններով։

Սրանք երևույթներ են, որոնք ցույց են տալիս գյուղի քայքայման պրոցեսը, որի հետևանքով՝ գյուղատնտեսության մեջ սկսվում է մասսայաբար կիրառվել վարձու աշխատանքը, այսինքն գյուղը դառնում է կապիտալիստական։

1897 թվականի մարդահամարի նյութերը այդ նպատակով մշակելով՝ մենք ստացանք՝ ըստ Հայաստանի գավառների վարձու աշխատանքի կիրառման հետևյալ պատկերը.

Երևանի գավառում բոլոր ծխերի 5,2%-ն են կիրառել վարձու աշխատանք, Ալեքսանդրոպոլի գավառում՝ 1,1%-ը, Նոր-Բայազետի գավառում 2%, Էջմիածնի գավառում՝ 4,6%-ը, Դարալագյազում՝ 4%-ը և այլն։

Գյուղի քայքայման պրոցեսը, նրանում շերտավորումը ցույց տալու համար, մենք օգտագործել ենք նաև գյուղացիական բյուջեները, որոնք հրապարակված են Երևանի Գետական Հավաքարանի գիտական աշխատությունների 23-րդ հատորում, այդ պատճառով էլ նրանց վրա կանգ չենք առնում։

Բոլոր տվյալներից երևում է, որ Հայաստանի հեռուեֆորմյան գյու-

դում կապիտալիստական հարաբերությունները ակնհայտ կերպով երեան են գալիս։ Դրա պատճառն, իհարկե, ոչ այնքան գյուղատնտեսության զարգացման ներքին էվոլուցիան է՝ բխած ունֆորմների կիրառումից, որքան ռուսական կապիտալի անմիջական ներգործությունը մեր գյուղատնտեսության մի քանի ճյուղերի վրա։

Հետևաբար Ռուսաստանի էկոնոմիկան բնութագրվում է որպես մի շրջան, երբ ստեղծվում է ներքին շուկա խոշոր արդյունաբերության համար։

Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունը նվիրել է հենց Ռուսաստանում ներքին շուկայի գոյացման պրոցեսին։ Հնարավորություն չունենալով հանգամանորեն կանգ առնելու այդ խնդրի Լենինյան վերլուծության վրա, մատնանշենք սակայն, որ ըստ Լենինի ներքին շուկայի լայնացման հիմնական ցուցանիշներն են՝ ապրանքաշրջանառության աճը, առևտրա-արդյունաբերության աճը, դյուզացիության քայքայվելը և այդ բաղդի վրա վարձու աշխատանքի կիրառումը։

Այնպիսի մի երկրի համար, որպիսին հանդիսանում էր Հայաստանը կապիտալիստական հարաբերությունների առաջացման ու զարգացման հարցերը քննելիս, պետք է ոչ թե վերևում մատնանշված ցուցանիշների մեխանիկական որոնում կատարել, Հայաստանի էկոնոմիկան վերցնելով ինքնամփոփ վիճակում, այլ ընդունելով, որ Հայաստանը հանդիսացել է ռուսական կայսրության ծայրագավառներից մեկը, ցույց տալ, թե ինչ դեր է խաղացել նա Ռուսաստանի խոշոր արդյունաբերության համար ներքին շուկա ստեղծելու գործում։

Մատնանշենք, սակայն, որ այս դեպքում էլ ուսումնասիրողի համար անմիջական ուղեցույց է ծառայում լենինյան ուսմունքը կապիտալիզմի զարգացման մասին ընդհանրապես, կապիտալիզմի զարգացումը ըստ լայնքի մասնավորապես, որոնք շարադրված են նրա աշխատություններում։

Մարքս-լենինյան ուսմունքը կապիտալիզմի զարգացման անհամաչափության մասին ուսուցանում է, որ երբ հողագործության մեջ ձեռքական մասնագիտությունները շատ են (իսկ դրանք Ռուսաստանում բավականաչափ շատ էին), նրանք դանդաղեցնում են գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման տեմպերը։ Իրա հետևանքով պարզ է, որ բարձր տեմպերով զարգացող արդյունաբերությունը չբավարարվելով ներքին նահանգներով պետք է լրացուցիչ շուկաներ որոներ։ (Լենինը, սակայն լրացնում է, որ այդ բնավ էլ չի նշանակում, թե գյուղատնտեսությունը չէր կարող առնասարակ ներքին շուկա ծառայել առանց ծայրագավառների)։ Այդ նշանակում է, որ Ռուսաստանի զարգացող արդյունաբերությունը չբավարարվելով ներքին նահանգներով, պետք է ձգտեր դեպի ծայրագավառները։ Այս հանգամանքները նկատի առնելով, Լենինը մանրամասն հետազոտության հիման վրա կառուցեց իր ինքնատիպ կուռ թեորիան՝ «կապիտալիզմի զարգացումը ըստ խորության և զարգացումն ըստ լայնքի»։ Ինչպես հայտնի է, Լենինն ուսումնասիրել է Ռուսաստանի կապիտալիզմի զարգացումն ըստ խորության, բայց դրա հետ միասին նա տվել է ցուցումներ նաև կապիտալիզմի զարգացումն ըստ լայնքի ուսումնասիրելու համար։

Ուսումնասիրել Ռուսաստանի այս կամ այն ծայրագավառում կապի-

տալիստական հարաբերությունների զարգացումը, այդ նշանակում է պատասխան տալ հետևյալ երկու հարցերին՝ նախ տվյալ տերիտորիայի դերը Ռուսաստանի խոշոր արդյունաբերության համար ներքին շուկա ստեղծելու գործում և ապա կենտրոնի դերը ծայրամտսերում կապիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ ու այդ զարգացման առանձնահատկությունները։

Լենինի գրություններից հետևում է, որ կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ըստ լայնքի Անդրկովկասի համար նշանակում էր՝

1. Նրան համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ ներգրավել ու վերածել շուկայի՝ ռուսական ֆաբրիկաների համար.

2. Պայմաններ ստեղծել բուն իսկ Անդրկովկասում արդյունաբերության զարգացման համար և

3. Իրականացնել արդյունաբերության անջատումը հողագործությունից։

Այս պրոցեսներն իրականանում են նախ և առաջ շնորհիվ այն բանի, որ Անդրկովկասը Ռուսաստանի հետ միացվում է երկաթուղային հարմար ճանապարհներով։

Սկսած 1872 թվականից մինչև 1900-ական թվականները Անդրկովկասում կառուցվում են 1948 կիլոմետր երկարությամբ 9 երկաթուղային գծեր։ Դրանցից միայն մեկն էր անցնում Հայաստանով և այն էլ բավականին ուշ՝ 1899 թվականին, որի երկարությունը 350 կիլոմետր էր։ Իրականացնելով երկաթուղային շինարարությունը և այն Ռուսաստանի ընդհանուր ցանցի հետ միացնելով, արդեն վերանում են տնտեսական այն արգելքները, որոնք ճորտական հարաբերությունների հետ միասին թույլ չէին տալիս Անդրկովկասի կապիտալիստական զարգացումը։

Ռուսական կապիտալն այժմ հնարավորություն ուներ իր բոլոր ձեռքերով ներթափանցելու Անդրկովկաս։ Անդրկովկասի հարուստ ընդերքի շահագործումն այժմ արդեն դրվում էր ռեալ հողի վրա։ Սկսվում է նաև արտասահմանյան կապիտալի հոսանքն Անդրկովկաս, մասնավորապես լեռնային արդյունաբերության մեջ, ուր կապիտալի ցածր օրգանական կազմի պայմաններում, բանվորական ուժի առատության հետ միասին հնարավոր էր ստանալ շահույթի ավելի բարձր նորմա, քան Ռուսաստանում և Եվրոպայում շահույթի միջին նորման էր։ Անդրկովկասը ռեալ կերպով ընդգրկվում է համաշխարհային շրջանառության մեջ. առաջանում են արդյունաբերության նոր ճյուղեր. հղածներն էլ սկսում են աճել ավելի արագ կերպով։ Այդ բոլորի հետևանքով «տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների դուրսմղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին։ Ընկնում էր դենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ. նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի. ճարպի, սոդայի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի էժան էին պատրաստվում ռուսական գործարաններում, որոնք իրենց շինվածքները Գովկաս էին ուղարկում... ռուսական կապիտալիզմը Գովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառու-

թյան մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մեացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկություններ-ը, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»[1]

Ռուսական և արտասահմանյան կապիտալների ներգործությունն Անդրկովկասի տարբեր մասերի վրա միևնույն չափով և միևնույն ուղղությամբ չի կատարվել։ Այն ժամանակ, երբ Ապշերոնը դեպի իրեն էր քաշում արտասահմանյան և ռուսական կապիտալները, այն ժամանակ, երբ նույն պրոցեսներն էին տեղի ունենում նաև Վրաստանի մարգանեցի և ածխի արդյունաբերության ճյուղերում, Հայաստանի ընդերքը շարունակում էր կուսական վիճակում մնալ։

Ճիշտ է, այստեղ շատ հնուց գոյություն ուներ պղնձի արդյունաբերությունը, սակայն նա շարունակում էր աշխատել սահմանափակ ծավալով տեխնիկական ցածր պատվանդանի վրա։

Ուրալում վաղուց բուն դրած ռուսական կապիտալը չէր հոսում այստեղ, իսկ ինչ վերաբերում է արտասահմանյան կապիտալին, նրա դերն էլ երկրի էկոնոմիկայում մեծ չէր։

Այդ նշանակում է, որ արդյունաբերական զարգացման տեսակետից Հայաստանի համար ռուսական և արտասահմանյան կապիտալների մուտքը Անդրկովկաս առանձնակի նշանակություն չունեցավ։ Այսպես, երբ մենք վերցնում ենք 1893—94 թ. թ. տվյալները Անդրկովկասի արդյունաբերության մասին, ստանում ենք այսպիսի պատկեր։ Բոլոր գործարանների, ֆաբրիկաների և մանուֆակտուրաների թվաքանակը միասին վերցրած 10533 էր, նրանցում զբաղված բանվորների քանակը—51582, տարեկան արտադրանքը կազմում էր 60438 հազար ռուբլի։

Ըստ ձեռնարկությունների թվի Երևանի նահանգում էին գտնվում ամբողջ ձեռնարկությունների 40 %-ից ավելի (4117), սակայն բանվորների զբաղվածության %-ը 16,6 էր։ Այդ տոկոսների տարբերությունը մատնացույց է անում Երևանի նահանգում եղած արդյունաբերական ձեռնարկությունների խիստ գաճաճային լինելը։

Ինչ վերաբերվում է արտադրանքին, Երևանի նահանգը տալիս էր ընդհանուր արտադրանքի 2,7 %-ը (1753 հազար)։ Եվ դա հասկանալի է։ բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք գտնվում էին Հայաստանում, բացառությամբ պղնձի, իրենցից ներկայացնում էին կիսատնայնագործական տիպի ձեռնարկություններ։ Այդ քանակությունից 2214-ը ջրաղացներ էին, 196-ը ձիթահաններ, տյսինքն՝ ամբողջ ձեռնարկությունների մոտ 45 %-ու։

Այսպես չէր գրությունը Անդրկովկասի մնացած նահանգներում։ Ելիզավետպոլի նահանգում գործում էին 2 խոշոր պղնձաձուլական գործարան գերմանական կապիտալի տիրապետությամբ։ Գործարանները սարքավորված էին ժամանակակից տեխնիկայով և սնվում էին էլեկտրո-էներգիայով։ Քութայիսի նահանգում այդ ժամանակ արդեն շահագործման մեջ էին գտնվում մարգանեցը և ածուխը. Բաքվում մշակվում էր նավթը, որի բազայի վրա առաջանում էին արդյունաբերության նոր ճյուղեր։

[1] Վ. Ի. Լենին. Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, Երկեր, հատոր III, հրատ. հրատ., Երևան, 1938 թ. էջ 674։

Այդ բոլորի ազդեցության տակ էր, որ «նոր բնակավորված կամ այն լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տընտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի և ծխախոտի ֆարրիկանտների երկիր և պարոն Կտրոնն անգթորեն հանում էր հպարտ լեռնականի վրայից նրա բանաստեղծական ազգային զգեստը և զարդարվում էր եվրոպական լակեի զգեստով»[1]

Լենինի կողմից ցույց տրված այդ պրոցեսները Անդրկովկասի տարբեր վայրերում միևնույն տեմպերով և միևնույն ուղղությամբ չէր կատարվում։ Այն ժամանակ, երբ կապիտալիստական արդյունաբերության զարգացման հետևանքով Ադրբեջանում և Վրաստանում քաղաքային բնակչությունն աճում էր արագ տեմպերով ի հաշիվ հողագործական բնակչության, Հայաստանում դրությունն այլ էր։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացմամբ տեղի էր ունենում գյուղացիության քայքայումը, բայց քայքայման պրոցեսը չէր զուգորդվում քաղաքային բնակչության աճման հետ։

19-րդ դարի վերջին՝ հայ գյուղում առաջացած շարժումը, այսպես կոչված «պանդխտությունը» այդ երևույթի ցայտուն արտահայտությունն է հանդիսանում։

Այդ պարագայի մեջ պետք է տեսնել նաև այն, որ Հայաստանում բնակչության անջատվելը հողագործությունից չէր համընկնում նրա քաղաքային բնակչության աճման հետ։ Այս բանը հաստատվում է նաև բնակչության ընդհանուր աճման մասին եղած տվյալներով։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով 1903 թվականին Իրաքլի նավթարդյունաբերության մեջ զբաղված 23435 բանվորներից 28%-ը հայեր էին։ Հայաստանից մեծ չափով դիմում էին այլուստանքի Անդրկովկասի այլ վայրերն էլ, Ռուսաստան և նույնիսկ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները։

Հայաստանում կապիտալիզմի զարգացման առանձնահատկությունները հասկանալու տեսակետից ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում Անդրկովկասում քաղաքային բնակչության մեջ կատարված տեղաշարժերի մասին եղած տվյալները։

1855 - 1886 թ. թ. Անդրկովկասի քաղաքների բնակչությունն աճել է 64,5 %-ով։ Նույն ժամանակամիջոցում Երևանի բնակչությունն աճել է 25,1 %-ով, իսկ Ալեքսանդրոպոլինը՝ 44%-ով։ Պետք է նկատել, սակայն, որ Ալեքսանդրոպոլն այս տեսակետից բնորոշ չէ, նկատի առնելով մի շարք հանգամանքներ, ինչպես, օրինակ՝ նրանում եղած զորքերի քանակը, 1877—78 թ. թ. ռուս-տաճկական պատերազմների ժամանակ գաղթականների ընդունումը և այլն։

Եզրակացությունն այն է, որ Հայաստանում կապիտալիզմը արդյունաբերության մեջ ներքին թույլ զարգացում է ունեցել, իսկ Ռուսաստանի և արտասահմանյան կապիտալների ուժեղ հոսանք չի եղել Հայաստանի արդյունաբերության մեջ։ Բացառությամբ պղնձի, արդյունաբերության

[1] Վ. Ի. Լենին, «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», Երկեր հատոր III, կուսհրատ. Երևան, 1938 թ. էջ 674—675։

մեացած ճյուղերն ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը, չեն անցել զարգացման մանուֆակտուրային աստիճանից։

Դրա հետևանքով Հայաստանում բանվորական ուժի ներքին պահանջ չի առաջացել։ Այսպես էր դրությունն արդյունաբերության այն ճյուղերի նկատմամբ, որոնք կապված չեն եղել գյուղտնտեսության հումքի մշակման կամ կիսամշակման հետ։

Այս ամենը նշանակում են արդյոք այն, թե Հայաստանում կապիտալիզմ չի եղել ու չի զարգացել, ինչպես իզուր աշխատում են հաստատել որոշ ընկերներ։ Բնավ էլ ոչ։ 19-րդ դարի 2-րդ կեսից կապիտալիզմը սկսում է զարգանալ և խորանալ մեր գյուղատնտեսության մեջ ինչպես ներքին էվոլուցիայով, այնպես էլ արտաքին հանգամանքների, մասնավորապես ռուսական կապիտալի ազդեցության տակ։

Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացումն իր տեմպերով գերազանցում էր կապիտալիստական բոլոր երկրներին, որը երևում է հետևյալ տվյալներից.—1860—1883 թ.-թ. շրջանում բամբակի հումաշխարհային սպառումն աճել է 78,3 %-ով, Ռուսաստանում այդ նույն շրջանում աճման տոկոսը կազմել է 171,2։ Դրան համապատասխան աճել է նաև ներմուծումը, բայց Ռուսաստանը հենց սեփական բամբակի բաղա էր ուզում ունենալ։ Եթե նկատի ունենանք, որ Ռուսաստանի տերիտորիայի ոչ բոլոր մասերն էին, որ կարող էին ծառայել որպես բամբակամշակության բաղա (բացառությամբ Միջին Ասիայի, որը նվաճվեց համեմատաբար ուշ) այստեղից էլ ահա բամբակի պահանջը Հայաստանի գյուղատնտեսությունից Ռուսաստանի համար դառնում է օրվա հարց։ Ըստ այդմ բամբակի արտադրությունն ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում Հայաստանում ավելանում է 9 անգամ, հետագայում այդ թվերն ավելի են աճում։ Այսպես՝ 1890 թ. Աղստաֆա կայարանից Ռուսաստան է ուղարկվել 386,446 փութ բամբակ, 1892 թ.՝ 409,811 փութ բամբակ, 1893 թ.՝ 646, 885 փութ բամբակ։

Մամուլում տեղեկություններ կան նաև այն մասին, թե ըստ տարիների ռուսական ինչ ֆիրմաներ որչափ են Հայաստանից բամբակ ուղարկել Ռուսաստան։ Պրոպորցիոնալ կերպով ընդարձակվել է նաև բամբակի ցանքսերի տարածությունը։

Գյուղատնտեսության այս ճյուղի կապիտալիստական զարգացումը չի ընութագրվում, ի հարկե, միայն նրանով, որ սրա արտադրանքը ապրանքային էր, այդ դեռ քիչ է։ Կարևոր մոմենտներից է նաև այն, որ բամբակը լինելով աշխատարար կուլտուրա, միևնույն ժամանակ կապված է շատ ծախսերի հետ, թեպետ և նա տալիս է մեծ եկամուտներ։ Հասկանալի է, որ բամբակի մշակությունը մատչելի էր գյուղացիական այն տնտեսություններին, որոնք ունեին տնտեսական լայն հնարավորություններ։ Եվ որ գլխավորն է, սրանք կիրառում էին վարձու աշխատանք։

Այդ նույն շրջանում, այսինքն 1870—1896 թվականներին, աբսոլյուտ կերպով աճում է նաև խաղողի մշակությունը, որի բռնած տարածությունը 1870 թ. 4129 դեսյատինից 1896 թվականին հասնում է մինչև 5700 դեսյատինի, այսինքն ավելանում է 1,3։

Հատկանշական է, որ խաղողի այգիների առավել աճ կատարվում է Երևանի շրջակայքում և մերձակա գյուղերում։ Այստեղ էլ, ինչպես բամբակի մշակության ասպարեզում, մշակվող տարածությունները կենտրոնանում են ավելի սակավաթիվ մարդկանց ձեռքը և արտադրությունը կրում է ապրանքա-կապիտալիստական բնույթ։

1895 թ. Երևանի գավառի 71 այգեշատ գյուղերում ծխերի 21,9 %-ը բոլորովին չուներ այգիներ, մինչև 0,5 հեկտար ունեցողները կազմում էին բոլոր ծխերի 51%-ը։ Այս երկու խմբերը միասին, որոնք կազմում էին բոլոր ծխերի 73%-ը, տիրապետում էին ընդամենը 693 դեսյատին խաղողի այգիների, կամ ամբողջի 30%-ին։

Գարդ է, որ բարձր խմբերում եղած խաղողամշակությունն ուներ խիստ ապրանքային բնույթ։ Համարյա թե նույն պատկերն է ներկայացնում նաև Էջմիածնի գավառը։ Այգիների նման բաշխվածությունը նույնպես մատնացույց է անում գյուղատնտեսության այդ ճյուղի կապիտալիստական բնույթի մասին։ Այդ էլ դեռ բոլորը չէ։

Ինչպես բամբակը, այնպես էլ խաղողը մինչև սպառման հասնելը ենթարկվում էր տեխնիկական վերամշակության։ Վլադիմիր Իլիչ Լենինը հեռադրելով Ռուսաստանում գյուղատնտեսական պրոդուկտների վերամշակման վերաբերյալ վիճակագրական նյութերը, ցույց է տվել, որ մշակող ձեռնարկությունները անկախ իրենց տեխնիկական զարգացման մակարդակից ունեցել են կապիտալիստական բնույթ։ Այդ առթիվ Վ. Ի. Լենինն ասում էր. թե այն ձեռնարկությունները, որոնք կատարում են այդ վերամշակումը կամ կազմում են այդ նույն անտեսությունների մի մասը, որոնք արտադրում են գյուղատնտեսական հումքը կամ թե պատկանում են հատուկ արդյունաբերողներին, որոնք գնում են հումքը գյուղացիներից։

«Գաղաքատնտեսական տեսակետից այս երկու տիպերի միջև եղած տարբերությունն էական չէ։ Գյուղատնտեսական տեխնիկական արտադրությունների աճումը շատ կարևոր նշանակություն ունի կապիտալիզմի զարգացման հարցում։ Նախ՝ այս աճումն իրենից ներկայացնում է առևտրային հոդագործության զարգացման ձևերից մեկը, ընդորում հատկապես այնպիսի մի ձև, որն առանձին ցայտունությամբ ցույց է տալիս, որ հոդագործությունը դառնում է կապիտալիստական հասարակության արդյունաբերության ճյուղերից մեկը։ Երկրորդ գյուղատնտեսական արդյունքների տեխնիկական մշակման դուզակցումը սովորաբար անխզելիորեն կապված է լինում գյուղատնտեսության տեխնիկական առաջադիմության հետ. մի կողմից արդեն իսկ վերամշակության համար հումք արտադրելն ինքն իսկ հաճախ պահանջում է հոդագործության բարելավում (օրինակ, արմատապտուղների ցանքը). մյուս կողմից՝ վերամշակության ժամանակ ստացվող թափթփուկը հաճախ օգտահանվում է հոդագործության համար, բարձրացնելով նրա հողությունը և վերականգնելով թեկուզ և մասամբ այն հավասարակշռությունը, հոդագործության և արդյունաբերության միջև եղած այն փոխադարձ կախումը, որոնց խախտման մեջ է կայանում կապիտալիզմի ամենախորը հակասություններից մեկը»[1]

[1] Վ. Ի. Լենին. «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», Երկեր հատոր III, Կուսհրատ, Երևան, 1938 թ., էջ 317—318։

Ձեռնարկությունների երկու տիպերն էլ Հայաստանում առաջ են գալիս բամբակի և խաղողի տեխնիկական վերամշակման գծով։

Քանի գեռ բամբակի արտադրությունը չուներ խիստ ապրանքային բնույթ, նրա դառումը ինչպես նաև վերամշակումը կատարվում է գյուղացու տանը նրա ընտանիքի անդամների միջոցով, այս դեպքում բամբակի գտումը հանդես չէր գալիս որպես ինքնուրույն աշխատանքի բնագավառ, այլ նա ներկայանում էր որպես բամբակի վերամշակման անմիջական աստիճաններից մեկը։ Ապրանքային հարաբերությունների պայմաններում առաջ են գալիս բամբակը գտելու հատուկ ձեռնարկություններ։ Այդպիսի ձեռնարկություններ առաջ են գալիս հասկանալի պատճառներով խոշոր և ուժեղ տնտեսությունների մոտ, որոնք դառում էին ոչ միայն իրենց սեփական բամբակը, այլև ուրիշներինը, կիրառելով վարձու աշխատանք։ Ձեռնարկատերերը գտելով համագյուղացիների բամբակը, ձեռք են բերում ձեռնարկատիրական հասույթ, որի աղբյուրն անշուշտ նրանց մոտ գրաղված բանվորներից ստեղծած հավելյալ արժեքն է։ Այս նշանակում է, որ բամբակաղտիչ ձեռնարկությունները անկախ իրենց տեխնիկական զարգացման աստիճանից ունեին կապիտալիստական բնույթ։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով 1888 թվականին Երևանի նահանգում կային բամբակաղտիչ ձեռնարկություններ թվով 228, որոնք բաց են թողել 76,000 ռուբլու արտադրանք, զբաղեցնելով 722 բանվոր։

Նույնատիպ ձեռնարկություններ են հանդես գալիս նաև խաղողի տեխնիկական վերամշակության գծով։ Նույն 1888 թվականին Երևանի նահանգում կային 223 այսպես կոչված այգետիրական ձեռնարկություններ, որոնք արտադրում էին գինի ինչպես նաև թորում օղի։ 1893 թ. այդ կարգի ձեռնարկությունները թորել էին 8,2 միլ. աստիճան օղի ընդունելով 42 աստիճան թնդություն այն կկազմի 193.60՝ վեդրո։ Այդ ձեռնարկությունների կապիտալիստական բնույթի մասին գաղափար կազմելու համար ավելորդ չի լինի հիշատակել, որ յուրաքանչյուրը սեզոնում թորում էր միջին հաշվով 410 վեդրո։ Միանգամայն պարզ է, որ սովորական այգետերը չէր կարող իր սեփական այգուց օղեթորման համար այդչափ հումք ստանալ։ Հետևապես այդ ձեռնարկությունների տերերը առնվազն գյուղական կուլակներն էին, որոնք իրենց սեփական ապրանքային ելույթի հետ միասին գյուղացիներից գնելու ճանապարհով տեխնիկական վերամշակման էին ենթարկում նաև վերջիններիս խաղողը։

Մենք այստեղ գործ ունենք արդեն առևտրական հոդագործության հետ, որը ձուլված էր մանուֆակտուրային ձեռնարկությունների հետ ունենալով բացահայտ կապիտալիստական բնույթ։

Բոլոր ասածներից երևում է, որ ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը Հայաստանում եղած գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկություններն ունենալով կապիտալիստական բնույթ դեռևս կանգնած էին զարգացման մանուֆակտուրային աստիճանի վրա։

Արտադրության այս ճյուղերը միայն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին են աստիճանաբար թևակոխում զարգացման գործարանային աստիճանը։

Հայաստանում եղած այսպես կոչված ոչ կատարելագործված ձեռնար-

կությունների անբավարար լինելը շուկայի պահանջմունքները բավարարելու գործում 90-ական թվականների վերջերին բացահայտ է դառնում։

Սրեան են գալիս նոր ձեռնարկություններ՝ գործարաններ։ Առաջին գործարանը ներսես Թայիրովինն էր, որ 1890 թ. արտադրեց 35,000 ասատիճան կոնյակի սպիրտ, 1894 թ. նրա արտադրանքը ասնապատակվեց, աճելով 325,000 աստիճանի։ 1893 թ. Երևանում առաջ են գալիս կոնյակի նոր գործարաններ՝ Աֆրիկյանների, Դյոգալովի, Սատաջովի և այլն։ Արդեն 1900 թ. Հայաստանում եղած գործարանները մանուֆակտուրաների հետ միասին արտադրում էին մոտ 9 միլիոն աստիճան սպիրտ։

Այդ նույն շրջանին է վերաբերվում սպիրտ արտադրող ձեռնարկությունների կենտրոնացումը, որի իրականացնողը հանդիսացավ խոշոր կապիտալիստ Լ. Ն. Շուստովը։ Սա հետզհետե դուրս մղելով մնացած գործարանատերերին, կատարելագործեց տրտագրությունը։ Մանուֆակտուրային ձեռնարկությունների արտադրանքի անսակարար կշիռը հետզհետե սկսեց ընկնել ընդհանուր արտադրանքի մեջ ի հաշիվ գործարանների արտադրանքի անսակարար կշռի ավելացման։ Այսպես, եթե 1893 թ. երկրում արտադրված 8,55 միլիոն աստիճան սպիրտից կատարելագործված գործարանները տալիս էին ընդամենը 418 հազար աստիճան, ապա 1911 թ. արտադրված 15 միլիոն աստիճանից 7,2 միլիոնը տալիս էին գործարանները, որը կազմում էր ամբողջ արտադրանքի համարյա կեսը։

Արդյունաբերության առանձին ճյուղերի առաջացման ու զարգացման պատմությունից անցնելով նրա զարգացման առանձնահատկությունների հարցին, ամբողջապես վերցված պետք է նկատել հետևյալը.

Հայաստանում գործարանային արդյունաբերության ամենահին ճյուղը պղնձի արդյունաբերությունն է, ավելի ուշ առաջացան գինու և կոնյակի արդյունաբերությունը։

Աշխատանքի հասարակական բաժանումը Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսի ընթացքում չհասավ այնպիսի աստիճանի, որ գոյություն ունեցող արդյունաբերության ճյուղերից առանձնանային նոր ճյուղեր. ասենք թե պղնձի արդյունաբերության բազայի վրա առաջանային մեքենաշինական ձեռնարկություններ, կամ թե բամբակաղաղիչ արդյունաբերության բազայի վրա առաջանար տեքստիլ արդյունաբերություն։

Աշխատանքի հասարակական բաժանման չիորանալու պատճառը Հայաստանում ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունն էր, որն արհեստականորեն արգելակում էր արտադրողական ուժերի նորմալ զարգացումը։ Այդ էր պատճառը, որ այնպիսի մի կարևոր ճյուղ, ինչպիսին պղնձի արդյունաբերությունն էր, նրա տեխնիկան և էկոնոմիկան հիշյալ ժամանակաշրջանում չկրեցին լուրջ փոփոխություններ։ Պղնձաձուլելու հին տեխնիկան, հանքաքարը հանելու միջոցները մնում էին անփոփոխ տասնամյակների ընթացքում։ Ռուսական կապիտալի դերն այս ճյուղի համար դերոյի էր հավասար։ Արաստահմանյան կապիտալն էլ երկրում չունենալով ուժեղ մրցակիցներ մեծ փոփոխություններ չէր մացնում արտադրության տեխնիկայի մեջ։

Ըստ այնմ Հայաստանի արդյունաբերության կապիտալիստական զարգացումն ուներ այն առանձնահատկությունները, որ մինչև 20-րդ դարի սկզբները նրա մեջ համակենտրոնացումը կատարվում էր խիստ դանդաղ,

նա չհասավ կենտրոնացման այնպիսի աստիճանի, որ արդյունաբերական զարգացման շրջանից անցներ մոնոպոլիստական զարգացման փուլը։

Հայաստանի արդյունաբերության այդ կարևոր ճյուղի մյուս առանձնահատկությունն էլ այն էր, որ նա ուներ էքստերիտորիալ բնույթ՝ երկրում ստեղծված հավելյալ արժեքը հոսում էր երկրից դուրս, դրանով էլ հենց կանխում կապիտալի համակենտրոնացումը և կենտրոնացումը։

Արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման այդ առանձնահատկությունների հետևանքով, երկիրը գնում է դեպի աղքատացումը։ Լինելով գյուղատնտեսական երկիր, 20-րդ դարի սկզբին Հայաստանի գյուղատնտեսությունը կանգնած էր տեխնիկական շատ ցածր մակարդակի վրա։ Գյուղական բնակչությունից ահագին քանակությամբ մարդիկ ենթարկվելով քայքայման, քաղաքներում չէին կարողանում իրենց բանվորական ուժի կիրառում գտնել։ Սա պաուպերիզմ էր, որը հետևանք էր կապիտալիստական հարաբերությունների յուրահատուկ զարգացմանը։ Այդպես շարունակվեց Հայաստանի էկոնոմիկայի զարգացումը մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը։